



ԵՄ-ի արձագանքը կորոնավիրուսի համավարակին՝ Արևելյան գործընկերության տարածքում

#strongertogether



Մարտ, 2020թ.
#Coronavirus

Կորոնավիրուսի բռնկման իր գլոբալ արձագանքի շրջանակներում Եվրոպական հանձնաժողովը շտապ աջակցության փաթեթ է մոբիլիզացնում՝ Հայաստանի, Ադրբեյջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի համար:



140 միլիոն եվրո՝

անհետաձգելի
կարիքներին



Մինչև

700 միլիոն եվրոյի

կարծամկետ և միջնաժամկետ
աջակցություն՝ տարածաշրջանի
սոցիալական և տնտեսական
վերակազմմանը

Անհետաձգելի կարիքներին արձագանքում.



**Աջակցություն առողջապահության
ոլորտին (30 միլիոն եվրո).**

- Աշխատանք ԱՀՄ-ի հետ՝ բժշկական սարքավորումների և անձնական պարագաների (թոքերի արհեստական օդափոխման սարքեր, լաբորատոր լրակազմեր, պաշտպանիչ դիմակներ, պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ խալաթներ և պաշտպանիչ համազգեստներ) մատակարարումն ապահովելու նպատակով.
- Բժշկական և լաբորատոր անձնակազմերի վերապատրաստում ու իրազեկվածության բարձրացում՝ բոլոր վեց երկրներում:



**Աջակցություն հասարակության
ամենախոցելի խմբերին (11.3 միլիոն եվրո).**

- Մինչև 60,000 եվրոյի չափով դրամաշնորհների տրամադրում ջաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ անհետաձգելի կարիքներին արձագանքելու համար: Օրինակ՝ հեռավար ուսուցման կազմակերպման գործում տեղական դպրոցներին աջակցությունը, ինչը հասանելի է նաև ԵՄ տարածաշրջանային «Արագ արձագանքման մեխանիզմի» միջոցով.
- «Արևելյան գործընկերության համերաշխության ծրագրի» գործարկում՝ տեղական կազմակերպություններին տրամադրվող ենթադրամաշնորհների միջոցով ուշադրության կենտրոնում պահելով ազգաբնակչության ամենախոցելի խմբերին:

Բռնկման սոցիալ-տնտեսական ազդեցության մեղմացում.

Միջազգային ֆինանսական հաստատությունների (ՄՖՀ-ներ) և **TEAM EUROPE**-ի օրինակով ԵՄ անդամ պետություններից ֆինանսավորող հաստատությունների հետ սերտ համագործակցություն՝ համակարգված եվրոպական արձագանք ապահովելու նպատակով.

100 միլիոն եվրոյի
չափով աջակցության նոր
ծրագիր՝ **ՓՄՁ-ներին**, այդ
թվում՝ ինքնազբաղվածներին
և այլոց օգնելու՝ **հեշտությամբ
օգտվել վարկերից և
խթանել իրենց բիզնեսը**
ճգնաժամից հետո:

ՓՄՁ-ների համար
տեղական արժույթով
200 միլիոն եվրոյի
գործող **վարկային գծեր**
և դրամաշնորհներ՝
«EU4Business»
նախաձեռնության
միջոցով:

**Կայուն զարգացման
եվրոպական
հիմնադրամի (ԿԶԵՀ)**
միջոցով ԵՄ հարևանության
համար **500 միլիոն եվրոյի**
հասանելիություն՝
տարածաշրջանում արագ
կերպով իրացվելիություն
ապահովելու նպատակով:

Ի՞նչ է ԵՄ-ն արդեն իսկ անում Արևելյան գործընկերության համար՝ կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ իրավիճակին դիմակայելու ուղղությամբ:

Հայաստան

- Շիրակի, Տավուշի և Լոռիի մարզերում մարդասիրական օգնության փաթեթներ կատարվող ավելի քան 3000 խոցելի տնային տնտեսություններ, որոնցում առկա են տարեցներ ու հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև՝ բազմազավակ ընտանիքներ՝ շնորհիվ Եվրոպական միության աջակցության:

Ադրբեջան

- Գյանջայի մասնագիտական վերապատրաստման և ուսուցման դպրոցը ԵՄ միջոցներով ձեռք կբերի անհրաժեշտ սարքավորումներ, որպեսզի պաշտպանիչ դիմակներ արտադրի Գյանջայի տարածաշրջանի համար:



Բելառուս

- Բելառուս, Ուկրաինա և Լեհաստանը միացնող տարածքներում գտնվող համայնքների աջակցման ուղղված ԵՄ միջառնականային համագործակցության նախագծերի շնորհիվ հիվանդանոցները համալրվել են անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններով, իմա՝ շտապ օգնության մեքենաներով և ռեսպիրատորներով՝ COVID-19 համավարակի դեմ պայքարում բժիշկներին օգնելու համար:



Վրաստան

- Բժշկական տեքստիլ պարագաների արտադրությամբ զբաղվող վրացական ընկերությունը ԵՄ-ի կողմից տրամադրված փոքր դրամաշնորհի շնորհիվ 12 լրացուցիչ կարի մեքենաների ձեռքբերումից մեկ շաբաթ անց կարողացել է արտադրել 40,000 բժշկական խալաթ:



Մոլդովա

- Մոլդովայում իրականացվող ԵՄ ծրագրերն արդեն իսկ պաշտպանական լրակազմեր, իմա՝ ձեռնոցներ ու դիմակներ են ապահովում խոցելի խմբերի ներկայացուցիչների և բժշկական անձնակազմի համար: Դրանք նաև սարքավորումային ստերիլիզատորներ են ապահովում ամբողջ երկրի տարածքում:

Ուկրաինա

- ԵՄ-ն աջակցում է համայնքային ճկունության ամրապնդմանը՝ խոցելի խմբերի ներկայացուցիչներին օժանդակելու, առցանց կրթության անցնելու, ապատեղեկատվության դեմ պայքարի և համացանցում վշակության թափանցության ու ստեղծարարության ամրապնդման միջոցով:

